



Ռազմահայրենասիրական թեմաները միշտ էլ առանձին ոգեշնչման և հրապուրանքի աղբյուր են եղել ընթերցողի համար: Ինքը՝ պատերազմը, զարմանալի չլինի ասել, իր դաժանությամբ հանդերձ, ինչ-որ տեղ ռոմանտիկ է (հենց դա չի՞ արդյոք նաև խթանում կամավորական շարժումը):

Սակայն հիշյալ թեմաներով ստեղծագործություններն անհամեմատ ավելի իմաստավորված ու հավաստի են ներկայանում, եթե հեղինակված են հենց ականատեսի՝ զինվորի կողմից: Այստեղ արդեն գործ ունենք ոչ թե գեղարվեստական, այլ պատմական ճշմարտության հետ: Այսպիսին են հենց գրախոսվող աշխատությունն ու նրա հեղինակը՝ Մարտին Բաղդասարյանը: Արտաքինից խաղաղ

աշխատանքի համար Ալափարսում ծնված մի մարդ, որի խառնվածքի մեջ, սակայն, ինչպես շատերի, ճշգրտումներ կատարեց Արցախյան պատերազմը: Այն դիմավորելով 44 տարեկանում՝ Մարտին Բաղդասարյանն առանց մի պահ վարանելու որոշեց անհապաղ մեկնել Արցախ՝ ուղղակի ճակատային զին: Հաճելի պատահականությամբ որոշ ժամանակ ընդգրկվել էր նաև իմ հայրենի գյուղի «Բալուջա» ջոկատում, որը գործուն մասնակցություն ունեցավ Շուշիի ազատագրմանը: Թշնամու դեմ մղված մի շարք այլ մարտերի խիստ արդյունավետ մասնակցությամբ, Մ. Բաղդասարյանը զինվորից հասավ փոխգնդապետի աստիճանի: Իր գրառումները նա սկսել է խրամատներում՝ գրիչը ձեռքին, տեսածը և ապրածը թղթին հանձնելու նվիրումով և հետագայում ռազմագիտություն դասավանդելով ավագ դպրոցներից մեկում, ինչից և ծնվեց ծավալուն ու արժեքավոր աշխատությունների հինգ հատոր՝ «Ազատագրում» համապարփակ անվանումով:

Քննարկման օբյեկտն այստեղ, սակայն, միայն վերջերս (2013 թ.) լույս տեսած հինգերորդ գիրքն է՝ ընդհանուր վերնագրին «հատրնտիր» հավելումով: Աշխատության հիմնական նյութը, ինչպես և սպասվում է, Արցախյան պատերազմն է, իսկ ավելի լայն առումով՝ անցյալ դարի վերջին մեկուկես տասնամյակը, որը իրավամբ հայոց պատմության ամենաարժանապատիվ էջերից է: Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմական ակնարկը ներկայացնելուց հետո հեղինակն անցնում է Հայաստանի Հանրապետությունում և Արցախում պաշտպանական ջոկատների կազմակերպման պատմությանը՝ հանգամանորեն ներկայացնելով «Չարենցավան», «Կոռնիձոր», «Ալաշկերտ», «Շենգավիթ», «Ջորավար Անդրանիկ» և տասնյակ այլ ջոկատների ձևավորման գործընթացը: Առանձին բաժիններով ներկայացվում են նաև Հաղրութի ինքնապաշտպանությունը, Շուշիի ազատագրումը, Արցախյան պատերազմում Ջավախքի դերակատարությունը: Հատուկ դրվատանքով գնահատվում են առանձին

գորահրամանատարների (Վազգեն Սարգսյան, Գուրգեն Դալիբալյան և ուրիշներ) կազմակերպական և մասնագիտական ունակությունները: Հատկապես պետք է արժևորել գրքում ներկայացված լուսանկարչական նյութը: 660-էջանոց մենագրության մեջ տեղադրված են 400-ի հասնող լուսանկարներ, որոնցում պատկերված են ոչ միայն զինվորներ և գորահրամանատարներ, այլև մարտական գործողություններ ու քարտեզներ, թիկունքի և ճակատի բնակավայրեր, հանրահավաքներ ու ռազմաքաղաքական բնույթի այլ վիճակներ: Դրանք խոսուն կերպով ներկայացնում են ժամանակաշրջանը և անգնահատելի նյութ են նրա հետագա ուսումնասիրության համար:

Բհարկե, գիրքը լեզվական և կառուցվածքային համակարգվածության տեսակետից բարձր մակարդակի չի հավակնում: Այն շարադրված է «ազատ» հայերենով, գուցե ասվի՝ հենց զինվորական լեզվով և նյութերի տրամաբանական համակարգում որոշ խախտումներով: Սակայն դա բնավ չի ստվերում այն ծանրակշիռ ավանդը, որ մենագրությունը կարող է ունենալ Արցախյան պատերազմի, ինչու չէ՞ նաև անցյալ դարի 80-90-ական թվականների ռազմաքաղաքական պատմության մեջ: Մ. Բաղդասարյանի «Ազատագրում» (հատրնտիր) մենագրությունը փաստավերագրական հարուստ նյութ է պարունակում և հանդես գալիս որպես հավաստի սկզբնաղբյուր մեր ժողովրդի պատմության ամենահարուստ ժամանակաշրջանի ուսումնասիրության համար:

Վերջապես հայտնի է, որ նորրոնձա ամեն մի աշխատություն արժևորվում է առավելապես տվյալ ժամանակին իր անհրաժեշտությամբ, այսինքն՝ արդիականությամբ: Այս տեսակետից Մ. Բաղդասարյանի մենագրությունը ոչ միայն անհրաժեշտություն էր, այլև ուղղակի օրախնդիր պահանջ: Հենց նման հողով ու հայրենասիրությամբ շաղախված ստեղծագործություններով չէ՞, որ կարելի կլիներ կանխել այսօրվա մեր ամենամեծ աղետը՝ արտագաղթը: Եթե վերջինս գոնե ներելի է գոյատևման այլ ելք չունեցող մարդկանց համար, ապա ի՞նչ կասեն նրանք, որոնք ուղղակի ավելի բարեկեցիկ կյանք են փնտրում՝ մոռանալով, որ ամենաբարձր բարեկեցությունը հարազատ հողի ու հայրենիքի ջերմությունն է: Էլ ինչու ենք, այն էլ արյունով, հետ բերել մեր հողերից մի կտոր: Թերևս գրախոսվող աշխատության հայրենակոչ ոգին, ի թիվս այլ հայրենասիրական ազդակների, օգնի այդ աղետը կանխելու:

ՍԱՐԳՍՅԱՆ Մ. Ս.

Տնտեսագիտության դոկտոր